


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE



ՊԱՏՄԱՆՔ

ԵՊԻՊՏՈՍ

Յարեկան դրո-ոդր 30

ԱՐՏԱՍՄԱՆ

Յարեկան ֆրանկ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՄ ԵՆՐԱՒ փոխարէն վճարումէ գեղծ պիտի ըլլան .

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԲԵՐԹ

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ :

Թե՛ ԱՐՇԱԼԱՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքական խնդրոց հարաւար պէտք է յիշել ներքագրութեան հասցեով քերթիս Մասնաւորութիւնը, որ կ'...

Փոստ - Կերպարագրութեան ԵՂԵՆ ՓՈՐՈՍԵԱՆ

ՓՈՐՈՐԻ ՓՈՓՈՋԵՒԱՅ

ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները սուղ ակտի կազմութեամբ առ են իրենց ցածրեւոր :

ZUSC 40 ՓԱՄԱ ՈՂՋ

Մ Շ Ա Կ

ՅՅ ԵՐՈՐԴ - ՏԱՐԻ

ՔՈՂԱՔԱԿԱՆ, ԴՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ՆՄՔԱԳԻՐ Ա. ՔՈՂԱՆՓԱՐ

ՀՐԵՆԱԳՐ ԿՐԻՎՈՐ ԱՐՇՈՒՆԻ

Բաժանորդագիրը . Ռուսիա՝ (10) Բուքար, Ամերիկա՝ (6) Տոլար, Արտասահման (30) ֆրանկ . Ստորագրուել կարելի է միայն ամսի մէկից . Ամէն լեզուով յայտարարութիւններ կ'ընդունուին . Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունուում .

Հասցէ՝ Rédaction du journal arménien « MECHAK »

Russie

TIFLIS (Caucase)

ԿՍՐԵՒՈՐ ԱԶԻ

« Արշալոյս » ի համար օժանդակ « Խմբագրական մարմին » մը կազմուել որոշուած է՝ որը միեւնոյն ժամանակ Գործադիր Ժողովը պիտի ներկայացնէ արդէն ձեւաւորուած « Հրատարակչական Ընկերութեան » :

Փափաքողները մինչև առաջիկայ 908 Յունիս 5 ապահովագրեալ նամակաւ պէտք է դիմեն « Արշալոյս » ի Խմբագրութեան հասցէին, որ նոյնպէս ապահովագրեալ նամակներով պաշտօնի պիտի կոչէ զիրենք : Ձեռքէ նամակ չ'ընդունուիր :

Քարտուղար - ներկայացուցիչ Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

24 Մայիս 908

ՅԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

(Շարն . Թիւ 18 էն եւ վերջ .)

Ի՞նչ կարելի է հետեւցնել նորին Արքայութեան այդ գրութիւնէն : Օրէնքի մարդ ըլլալ անհրաժեշտ չ'է՝ առանց վարանուի ըսելու որ եթէ, ինչպէս կը հաւատաւորի, օրէնքը պարաքի եւ իրաւունքի վրայ հիմնուած չ'է, յիշեալ օրհնածիր գրութիւնը այդ շէնքէն ներս չ'ընար մտնել . Խնամակալին պարտականութիւնն է ինք անձամբ հսկել իր հոգածութեան յանձնուած անհատին իրաւանքը վրայ, մինչդեռ Առաջնորդարանը, իր նամակով, ուրիշ բան չ'ընէր

բայց միայն կնոջ մը ծանուցանել թէ իր հեռացումը ամուսնոյն գոյքերէն մաս մը ծախուած է եւ մաս մ'ալ պիտի ծախուի դատարանի միջոցաւ : « Եւ, եթէ մեր խօսքին չ'էք հաւատար, Առաջնորդարանն իրաւունքն է հսկել ին թուղթերն ու պարտքն աչքէ անցուցէք » :

Ո՞վ է հսկեր առաջուան վաճառքին եւ ո՞վ պիտի հսկէ այս վաճառքին վրայ : Այս մասին եւ ո՞չ մի բան :

Ուրեմն, Առաջնորդարանը իր նամակաւ չ'է՞ կարգուած . Բայց դատարանի կողմէն ուղղակի Ս. Առաջնորդին եղած դիմումը հակառակը կ'ապացուցնէ : Արդեօք դատարանն է որ կը սխալի . Թերեւ, ըստ որում դատարաններն ալ պարզ մահկանացուներ են : Բայց այդ պարագային, այսինքն՝ ենթադրելով թէ Առաջնորդարանը խնամակալ չ'է եղած կը հարցընենք . 1. Հապա ո՞ր է իշխանութեամբ Տ. Ե. Թորոսեանը, յիմարանց խրկեց . և 2. Ինչու՞ դատարանին չ'ապատասխանեց թէ ինք, Առաջնորդարանը՝ արտօնուած չ'է այդ գոյքերուն վաճառմանը խնդրով զբաղելու :

Այս հարցումները իրենց կարեւորութիւնն ունին, ինչպէս պիտի ջանանք գտնել : Առ այժմ չ'մտնանք մէկ կողմէն՝ Ս. Հօր գրութեան թուականը, որ է՝ 2)15 Փետր . 907 ծանուցուած (երկրորդ) վաճառքին թուականը, որ է՝ Մարտ 5 . և նամակին անորոշ, տարտամ, պաշտան աքնա կերպարանը եւ միւս կողմէն՝ արդեւաբանութեամբ այր մը, անոր

կին մը և քարուքանդ ըլլալու վրայ գտնուող ընտանիք մը . . .

Հիմա, վերադարձուինք հոս Տիկին Ե. Թորոսեանի կողմէն Ս. Առաջնորդ Հօր գրութեան տրուած պատասխանը, մեր կողմէն ստորագծելով մի քանի մասեր, որոնց վրայ ընթերցողին մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք . (Այս պատասխանը հրատարակուեցաւ « Արշալոյս » ի 13 դր. թուոյն մէջ) :

Գերապատիւ

Տ. Մկրտիչ Ծ. Վ. Աղաւունքի

Առաջնորդ Հայոց Եկեղեցոյի

Եւն Եւն

Ի Քաղաքիս

Գերապատիւ Տէր՝

Ստանալու պատիւը ունեցած եմ, Ձեր 2538 համար եւ 2)15 Փետր . 1907 թուականի պաշտօնագիրը, որով կը ծանուցանէք թէ՛ Ամուսնոյս՝ Տիկին Ե. Թորոսեանի գոյքերէն մաս մը դատարանի կողմէ շահագրգիռ եղած եւ վաճառուած է ըստ պահանջման Դահլորեան եղբայրներու, եւ դարձեալ ուրիշ մաս մ'ալ նոյնպէս շահագրգիռ եղած է եւ առաջիկայ Մարտ ամսոյ 5 ին պիտի վաճառուի, եւ կ'ազդարարէք միայնգամայն թէ հակառակ թուղթերը եւ պարտքն իրաւանսունը կը դառնան արամագրիկ :

Ձեր Գերապատուութեան սոյն պաշտօնագիրը ստանալու առաջ, արդէն առիթ ունեցած եմ յայտնելու թե՛ դատարանի խնդիրներէ հասկնալու անձեռնիմաս եւ ներքական միջոցներէ ալ գուրի . Վստան ըլլալով որ՝ Ազգ. Առաջնորդարանը այսպիսի պարտքներու մեջ իր օրհնակները, իրաւասութիւնները ու պարտականութիւնները ունի քրտնելու, եւ ի հարկին նոյն իսկ ազգու միջոցներ ձեռք առնելու իր համայնիկն պահանջող անհասկնալու շահերը պաշտպանելու հարաւ . ու եւ՝ հարեւ լին ազգային այդ անհասկնալու իրաւունքն ունի ապաստելու որ այդ բարոյքները չ'ըզգուեիր ինձ, Բայց ի՞նչ կրնամ հետեւցնել, երբ Ձեր Գերապատուութիւնը այս անգամ իր պաշտօնագրով ինձի հրաւիրէր կը կարգայ, պարզապէս կատարուած աւերածներու հանգիստեաց ըլլալու համար :

Անուրաքանչիւ է որ միջոցներ չ'էին պակսեր Ազգ. Առաջնորդարանից, պէթ իմ իրաւունքներս եւ արժանապատուութիւնս պաշտպանելու եւ սեփական գոյքերս ազատելու սխալմանց գոյքերից՝ սակայն ի լրոյն տաքցած տեղեկութիւններէս՝ եթէ ստոյգ են՝ այնպէս կը հետեւցնեմ թէ՛ Տիկին Ե. Թորոսեանի սեփականութիւնը կարծուելով վաճառուած գոյքերը գրեթէ ամբողջ իմն են եւ Ձեր Գերապատուութիւնը՝ որ մեր Ազգ.

Պաշտօնատուներ իր ամբողջութեամբ կը ներկայացնէ, թոյլ տուաւ որ այս զրկանքները տեղի ունենան, ՀԱԿԶ ի թղթերուն եւ ՊԱՐՈՒԹԱՆ ներուն անտեղափոխելի պահպանութիւնը միայն վերապահելով Առաջնորդարանին եւ Դիւանատան, միթէ այդ թղթերուն Առաջնորդարանի մէջ զոյրոյն ունենալըն ալ՝ անոր - Առաջնորդարանի - վրայ գրուած նուիրական պարտականութիւններ չ'են եւ թաղար :

Ձեր Գերապատուութեան սոյն պաշտօնագիրը՝ առիթ կ'ընծայէ ինձ անգամ մ'ալ խնդրելու որ շնորհ ընել բարեհաճիք հայրաբար նկատողութեան առնել իմ հետեւեալ խնդիրներս :

1. Ճշտել եւ պաշտպանել իմ բոլոր իրաւունքներս, քանի որ Առաջնորդարանի իրաւասութեան եւ ներքական պատասխանատուութեան սահմաններուն մեջ են անոնք :

2. Եթէ այս պարտքայններուն մէջ է Թորոսեանի ներկայութիւնը անհրաժեշտ է, յիշեցնել անոր ազատութիւնը : Ստորագրեալ ըստ վկայութեան Ազգ. Տօքթէօս Մալեգեանի Պէյրի կը հաւատարմութիւնը երկարաձգելով՝ նիւթական եւ բարոյական կարեւոր վնասներ հասնելու պատճառ տալ :

3. Եթէ կարեւոր է՝ փաստարան մը նշանակել անոր կողմէ, նոյն իսկ իր հաւանութեամբ, անոր շահերն ալ պաշտպանելու համար, որովհետեւ պէտք է ըսեմ թէ՛ բոլոր այս եղած զրկանքները որոց մէջ թաքուն նպատակներ ալ կը նշմարուին, ծնունդ կ'առնեն մէկ ամսուան - 1906 Մարտ ամսոյ - տունի վարձքի յապաղումէն, որուն պատճառաւ իմ բոլոր իրաւունքներս ալ կորսուելու վտանգի կ'ենթարկուին :

4. Յետաձգել տալ գոյքերու վաճառումը, մընչեւ որ Առաջնորդարանը կարենայ եղած ապօրէն գործողութիւնները օրինաւոր ընդունել մը անցնել գոյքերու պակասները ճշտել, ստորագրելոյս իրաւունքները որոշել, եւ եթէ հարկ է եւ օրինաւոր, վաճառել տալ մնացեալները :

Այս օրինական գործողութիւնները անթերի կատարուելու պահուն, կը համարձակիմ ըսել թէ՛ Ձեր Գերապատուութեան խիղճն ալ կրնայ հանգարտ մնալ :

Շնորհ ըրէք . Գեր. Տէր ընդունել իտրին անհամաձայն հաւատարմութեան որով մտաչիմ ի համարոյր Ս. Աղոյն Ձերում :

ՄԱՐՈՒՆԻ Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Անտէր անօգնական կնոջ մը այս օրինաւոր եւ սրտաճմլիկ ազերապարին հանգէպ Առաջնորդարանը ի՞նչ ընթացք բռնեց . նախապէս ծախուածը ծախուելէն ետքը, գոնէ այս երկրորդ վաճառքին մէջ զատե՞ց,

որոշեց կնոջ ստացուած քը, ըստ ուրում կինը պատասխանատու չլինար ըլլալ ամուսնոյն արարքներուն (°): Ըստ մեր ստացած տեղեկութեանց, ազգային իշխանութիւնը ո՛չ միայն այս բանը չ'է ըրած, այլ նաև գոյքերու վաճառման միջոցին՝ պարզ

(°) Ծ. Խ. - Տ. Ա. Պալեան իր պաշտպանողականին մէջ « կինը պատասխանատու չ'լինար ըլլալ իր ամուսնոյն ԱՐԱՐՔՆԵՐՈՒՆ » պարբերութիւնովը եւ ուրիշներով ալ՝ ո՛ր է մեզադրելի ԱՐԱՐՔՆԵՐՈՒՆ ի գոյութիւնը խոստովանած կ'ըլլայ, որոց մասին ո՛ր է ատենի առջև ո՛չ քննութիւն բացուած է և ոչ ալ « արարք » ներու գոյութիւնը հաստատուած է: Եթէ վատարար և շարամտօրէն տարածանում անհիմն զրպարտութիւններու հաւատ և կարեորութիւն ընծայելու չափ գիւրահաւան գտնուած է Տ. Ա. Պալեան, ատիկայ տարբեր խնդիր է:

Բուն իրողութիւնը այն է որ՝ Առաջնորդարանը՝ մեզի ծանօթ Ա. Գեորգի Տեղեկի գաղտնի հրահանգներ ստանալով՝ ազգին արժանապատուութիւնը ստնակոխ ըրած, ազգային իրաւասութիւնները, որ զարգացած ազգերու մէջ սուրբ և նշխարական համարուած են, և ատենց հաշտոյն երբեմն զրահաւորներ ծախքայ կը հանեն, խարքեր հաւար օտարազգիներու ոտքին տակ ձգած և պաշտպանել զանց ըրած է, ունազործութիւններ ու գողութիւններ միանգամայն քաշալեւած է:

Իրաց այս խառնաշփոթ վիճակին մէջ, Տ. Ա. Պալեանի գրածներուն քանի մը մասերը Առաջնորդարանի այս աններելի զեղծումները կրնան քաշալեւել, որոց մասին մենք պիտի խօսինք աւելի ուշ՝ առ այժմ իր գրութիւնը անկողնակալ օրէնք և ամբողջովին հրատարակելով, առանց մտածելու մեր վերապահումները:

Հիմայ ժամանակն է որ վերջապէս յայտարարենք այլ ևս թէ՛ այս բոլոր վրդովեցուցիչ գէպերը՝ հանգուցեալ Ղևոնդ Եպիսկոպոս Շիշմանեանի « ԻՄ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ » տիտղոսով երկասիրութեան հրատարակութիւնը սկսելէն ծնունդ առին (Տե՛ս « Թագաւոր » Ա. Տարի 55 թիւ, և « Երթում » նոյն թուական) Եւ եթէ այդ հրատարակութեան կատարումը դատապարտելի « արարք » մ'է Մամլոյ և Խօսքի ազատութիւն վայելող Եգիպտոսի մէջ, այն ատեն անոր հրատարակումին հակառակորդները թող առաջ դան, գողցած կտորները և թողիկերը ձեռքերնին՝ ու թող հաստատեն թէ « դատապարտելի արարք » արդարացնող բան մը կայ հոն: Հակառակ պարագային՝ Տ. Թորոսեան ամեն դատաստանի առջև կարող է իրենց սխալ կարծիքներուն հակառակը հաստատելով ապացուցանել թէ՛ ցարդ եղածները անարդարանալի գողութիւն և ունազործութիւններ են և ո՛չ այլ ինչ: Իսկ զանոնք ո՛ր է միջոցաւ քաշալեւելները ո՛վ օք որ ալ ըլլան, մեզ սակիցներ են պարզապէս և միևնոյն պատժոյն արժանի:

հակող մ'ալ չ'է նշանակած իր կողմէն . . .

Ամենքնիս ալ գիտենք որ քեթեֆեները Առաջնորդարանի միջոցաւ կը կատարուին: Եւ ի՞նչ է քեթեֆե մը, ո՛չ ապաքէն անտէր մնացած գոյքերու վաճառումը: Արդ, հոս աչքի առջև ունինք գրեթէ այրի մնացած կին մը, Տիկին Ե. Թորոսեան, որ՝ բաց է բաց յայտարարելով թէ դատական գործերու անտեղեակ է՝ կը խնդրէ որ ազգային իշխանութիւնը դիւրացնէ ազատ արձակումը իր ամուսնոյն, որ արգելափակուած կը մնայ ո՛չ - քրէական պատճառաւ մը, որուն հետագոտութիւնը մեր նիւթէն դուրս է: Իսկ, կը յաւելու, եթէ այդ ազատ արձակումը անպատեհ է, գոնէ վաճառումի գործողութիւնները Ձեր հսկողութեան տակ առէ՛ք, վստահի դասակալ խնդիրներէ հասկնալու անձեռնդնիս եւ Երթում միջոցներէ աչ գոտի: Միւս կողմէն դատարանը յստակ և կտրուկ կերպով կը շեշտէ Առաջնորդարանին այս պարտականութիւնը. ուղղակի և կանխապէս անոր ծանուցանելով արձակուած վճիռը՝ գործադրումէն դէթ 20 օր առաջ: Եւ ի՞նչու այս կանխապէս կոչը, ո՛չ ապաքէն Առաջնորդարանին հասկցնելու համար թէ՛ իր պաշտպաններին շահերն ինկատի առնելով, ինք՝ խնամակալը՝ կը պարտի պէտք եղած միջոցները ձեռք առնել, թերթերու մէջ ազգարարել են: Ճիշդ այնպէս ինչպէս սեղի կուենայ ամեն քեթեֆեներուն առթիւ: Ունակութիւն մ'ըլլալու չափ հինցած այս ձեւակերպութիւնները ի՞նչու մոռցուած են այս անգամ:

Վերը ըսինք որ, Առաջնորդարանը կամ անգիտակ է իր բարձր պաշտօնին և կամ մէկէ աւելի կանոններ ու խիղճեր ունի իր տրամադրութեան տակ (°): Եթէ մեր այս յանդուգն բառերը չ'են արդարանար Թորոսեան ընտանիքին այս սպանցուցիչ հարցին առջև . . .

Ոչ - կամայական իշխանութիւն մը դէթ մակերևութային արդարութեան մը վրայ կը յենու, մինչդեռ հոս անոր ալ հետքը չ'եմ տեսներ: Բայց կարճ կապենք:

Առանց համար, որոնք իրենց մէջ մի բառին իմաստը « ջախջախիչ » և շանթահարող չ'կ'որակեն, շատ տափակ պիտի թուին վերողորմել տողերը: Բայց իմ նպատակս չ'է ո՛չ կիրքեր յուզել, ո՛չ այս կամ այն կողմին քծնել: Ուղեցի մի միայն հրատարակուած վաւերաթուղթերուն վրայ յենլով, ընթերցողին առջև պարզել գործուած անիրաւութիւն մը, որ հանրային հանգամանք ունի և ոչ թէ զուտ անհատական, ինչպէս ոմանք կը կարծեն: Եւ ջանացի ըլլալ պարզ յստակ, անպաճոյճ, վստահ սեթեւեթեալ ճշմարտութիւնը քիչ շատ կեղծիք կը բուրէ սնուրուած գեղեցկութեան պէս:

Այս տեսակ հարցերու մէջ, էական կէտը, զոր երբէք մոռնալու (°) Ծ. Խ. « Արշալոյս » թիւ 490 - 18

չ'է, այն է թէ՛ սահմանադրուած իշխանութիւն մը ազգին համարատու մարմին մ'է: Առանց այս սկզբունքը յարկել տալու, ոչ ոք՝ բացառելով մի քանի առանձնաշնորհներ՝ կարող կ'ըլլայ իր իրաւունքը պաշտպանելու:

Ա. ՊԱԼԵԱՆ

Յ. Գ. Իս առաջինը պիտի ըլլամ սխալած ըլլալս հրապարակող, եթէ եղելութեանց անճշտութիւնը հաստատող փաստեր մէջ բերուին: Ա. Գ

Ի Տ Ա Լ Ա Յ Ի Ն Ե Ր Ո Ի Գ Ա Ն Գ Ա Տ Ը

Իտալական թերթ մը՝ կ'ըսէ Բազմապիպ իր Մայիսի համարին մէջ. Թաւաշանեանի սպանման առթիւ կը գրէ. « Դե՛ղճ իտալացիներս, ամէն բանի մէջ ետ կը մնանք. ոճրայութեամբ թիւն մը ունէինք՝ որուն մէջ առօջին կը համարուէինք, անոր մէջ ալ հիմակ հայերը մեզ անցան »:

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Բ Է Է Ն

ԵՐՈՒՍԱԼԵՍԻ ԳԱՐԾԵՐ

ՊԱՐՏԱՃԱՆԱՊ ԸԼԼԱՆՔ

« Արշալոյս » ի 489 - 17 րդ. թիւին մէջ՝ Պոթոսի « Հայրենիք » Շաբաթաթերթէն արտատպուած գրութեան մը հանդիպեցայ, որ շափազանց յուզից զիս:

Երուսաղէմի վանքին տխուր վիճակը պատկերացնող « Ուխտաւոր » ի այդ արտածման սողերը պարտականութիւն կը ծանրացնեն իմ վրայ, հանրութեան առջև պարզելու այն քստմնելի ոճիրները՝ որոնք ժողովուրդի գիտակցութեան հետ, տեղի ունեցան վանքի շրջափակէն ներս՝ և թանձրամած քողի տակ:

« Ուխտաւոր » այս մասին աւելի մանրամասնութեանց մէջ չի՛ մտնել եւ ուրիշ ակնառեւներու կը թողու իրեն ձայնակցիլ, իր յուզած խնդիրը ժողովուրդեան նկատառութեանը յանձնելու եւ անով զբաղելով փրկելու համար Սուրբ տեղերը մօտալուս վտանգներէ և վարկաբեկումէ՛ թէ և գործը ինքնին դժուարին և մեծամեծ ուժերու կարօտութիւն ունեցած ըլլալ:

1902 - 3 ին, և որ Երուսաղէմի հաշուական առեղծածները լուծելու ջանքերը սկսան սուր կեղտարանք մը ստանալ, միաբանութեան մէջ ծայր տուին հակառակութեանց զգացումներն որ վրդովեցուցիչ համեմատութիւններու հասան, եւ պահ մը՝ վանական խաղաղ մթնոլորտը ապիկար տարբերու շահատակութեանց վայրը դարձու, որոնք պանդոխտ խոջողոտի ստեղծագործութեամբ փչրող եւ մահացու հարուածներ սկսան տալ այս ու այն մրցակցին:

Գործունէութեան խոհեմ միջոցները մէկ կողմ ձգած՝ մինչդեռ իսկ համարձակեցան բռնանալու եւ իշխելու համար ճշմարիտ և իրաւունքը ընդգրկող համողմունքով վրայ, նիւթականի հոգիներ շեղազնելով անոնց շուրջը: Աւ որովհետեւ վատ արամադրութիւններով ձեռք առնուած էր խնդիրը, ուրեմն անպատեհ հետեւանք մը անխուսափելի էր:

Արիւնահեղ կոխներու եւ ստոր մատնութիւններու զոհուցան ամեն անտէր, որոնք բարոյականը վանքին իր ամենակարեւոր պէտք մը եւ պատկառօթի կեանք մը ապրելը՝ իր անհրաժեշտ պայման ընդունուելու կողմնէին:

Բայց աւա՛ղ. այդպիսի օգտակար թեղազրանքներու հեղինակներն կորուստի մատնուեցան բիրտ ու երկրաբար մեքենայութեանց սղոցեցութեան ներքեւ, ամէն հետաքրքրութիւններու դէմ անհնաւազուտի պատնէջը քաշուելով, եւ այդ վիճակը՝ ցաւալի է որ մինչդեռ այս օր իսկ կը սեւէ, ինչպէս կարելի է հետեցնել « Հայրենիք » ի թղթակցին գուժարեք տողերէն:

Վերոյիշեալ թուականէն առդին անակնկալ եւ անբնական մահեր տեղի ունեցան վանքին մէջ. Շիշմանեան Եպիսկոպոս, Մկրտիչ և Յակոբ վարդապետներ՝ անպատեղի պայմաններու մէջ անհնաւ եղան, իսկ ատենց մահուան շուրջ ծնունդ առած տարակուսական շուկները՝ որ մտքերը յուզելու վրայ էին, փոքրատու Աւետիսի եւ համախոհներուն ստորնացուցիչ կարգադրութիւններուն առջև սեղի տուին . . .

Ամենէն ցաւալի կորուստը եղաւ հոգեւոր Շիշմանեան Եպիսկոպոսի անժամանակ անհետացումը՝ որ զօրաւոր պատուար եւ հակառակող մ'էր հաշուեպահանջ անուանեալ խմբակին վարկաբեկիչ գործելակերպերուն, միշտ համակիր մնալով սակայն անոնց սկզբունքին այսինքն հաշիւները պահանջուելուն օրինաւոր սահմանի մէջ:

Իր նախընտրած միջոցները զբոյգեցին իր հակառակորդները եւ այս վերջինները սկսան իրենց անբարոյականութեան սնունդը փնտրելու կտտալարական պաշտօնատուներու մէջ, այս ստիճաններու մէջ մատնուեցաւ Ֆրանսերէնի թարգմանուած Երուսաղէմի պատմութիւնը, որ հանգուցեալ Եպիսկոպոսին աշխատասիրութեան եւ ձեռնհասութեան կը պարտէր ազգը:

Այս մատնութիւնը Շիշմանեան Եպիսկոպոսի ամենէն մեծ եւ քայքայիչ վիրտիքն մէկը եղաւ եւ այս կարգի ոճրագործութեանց զոհը եղաւ նա, ո՛չ - բնական մահուամբ:

Շիշմանեան Եպիսկոպոս հայ եկեղեցուն համար ախպար եւ խեղճական հոգեւորականը կը մնայ, ազգասէր, բանաստեղծ, եւ իր ազգին զրական օգուտները նկատող: Աշխատութեան սիրահար այս եկեղեցականը՝ հայ հրապարակագրութեան տիտան մ'էր, իր անհատում գրութիւններով: Օր չէր ըլլար որ իր գրչին մէկ նոր արտագրութիւնը չ'ձաշակէինք մեր դասարաններուն մէջ:

Հայ մատենագրութեան կը թողուր ժողովուրդի հիմնական վէթերը շօշափող կարգ մը ձեռագրեր, որոնք մահուան օրերը անխղճօրէն աւարի արդեցան վանքի իր աշխատութեան սենեակին մէջէն, այս անհեթեթ վարմունքին ակնառեւները մէկէ աւելի են. անուանելու հարկ չ'կայ . . .

« Յաւերթը Հայրենիաց » տեղոյս « Արշալոյս » լրագրի Տպարանէն լոյս տեսած է ժամանակին « Հայրդի » ծածկանունով, անպահատեղի աշակցութեամբ Ազն. Մկրտիչ Էֆէնտի Պալլադեանի, որ ամէն ընթերցողի համար մատչելի, առատ եւ խորհրդածութեան արժանի նիւթեր կը պարուտակէ, լաւ դասաւորուած եւ մեծ ձեռնհասութեամբ արտագրուած:

Որչա՛փ սիրելի էր մեզի այդ ցաւաշունչ տողերը՝ զեւ անախպ, անյապօրէն կարգալ, լուի եւ հիմնալը մեր դասարաններուն մէջ:

Քրտնաշուն և անողու իր աշխատութիւններէն են քանի մը կարևոր թարգմանութիւններ եւ ինքնագիր « Արարի Կեանք » այս վերջինը երկու ստուար հատորներ են, մօտ 920 էջեր բաղկացած:

Սոյն չբնագագիւտ հատորներու շուրջ երկու եւ աւելի տարիներէ հետէ դարձած մեքենայութիւններն ու անպատեղի դժուարութիւնները Եգիպտոսայերէն ո՛չ մէկուն պատմելու հարկ

չկայ. ամենուրեք ալ գրեթէ ծանօթ է անոնց մանրամասնութիւնները. ոչ ոք կրնայ աստիճանով թէ այդ հրատարակութեան զօները եղան Ե. Թորոսեան եւ իրենները: Մենք թէև անտարբեր կը շարունակենք ան այժմ այդ եղբորդութիւնները. բայց պիտի գայ ժամանակը անշուշտ՝ որ զգած էինք վերջապէս եւ հաւաքաբար խորհրդածենք թէ՛ մեր ազգի անտարբերութիւնը մինչև ո՞ր աստիճան դատապարտելի է: Եւ միթէ պէտք չէ՞ հաւատալ որ այստեղ պատահած անտարբերութիւնը զեպքերը՝ կրկնութիւններն եւ շարունակութիւններն են հանգուցեալ Շիշմանեան Եպիսկոպոսի գէժ հանուած Սաղիմական հալածանքներուն անոր հակառակորդներէն կազմակերպուած ու անոնց ազդեցութեամբ սարքուած, աւար ու աւեր սիրելով չորս կողմը, այն ալ Եգիպտոսի պէս աղատ երկրի մը մէջ: Եթէ մենք լռենք, տարակոյս չկայ թէ Տ. Ե. Թորոսեան՝ իր ազգանունէր գործունէութեամբ եւ անձնուէրի օրինակելի նկարագրին թեւաբանաց անսալով չ'պիտի լռէ: Հետեւանքները: Անշուշտ անոր հետեւեալութիւնէն վերջապէս չ'են:

Այս մտային այլ եւս ծանրանալ չեմ ուզեր. բաւական պիտի համարիմ ըսել թէ՛ երբ Երուսաղէմի վանքին մէջ՝ Իզ. միւրիանի պէս Երկաթեայ յորջորջուած Պատրիարքի մը շուրջ, կարգ մը եղկելի ու գեանաքար մակարոյժներ վերոյիջեալ պայմաններուն մէջ ճարակ եւ քաջախելութիւն կը գտնեն. մեր Սաղիմական ազգային գործերը ասէք տարբեր ուղղութիւն մը չ'են կրնար ստանալ:

Վանքը վրդովեալ եւ յուսահատական հանգամանք մը կ'առնէ հետզհետէ: Օրուան տիրահոյակ հերոսները իրենց գծած արահետին վրայ կանգուն՝ մահու քստմեղի անգամաւր կը հնչեցնեն ահարկու: Յաղթանակը Ձերն է հիմայ. ո՞վ ձրիակեր մակարոյժներ:

Կրնաք պահ մը եւս միտքարկան վաղանցուկ գինովանքով մը հրճուել ու զառանցել խելայեղիչ գոհունակութեամբ. . . Ազգին օրօրանին առաջ բազմած թմրեցուցիչ օրօր մը, կամ ամի մը փոշի աչքերն, ու խաղաղութիւն ամենեցուն. . .

Եթէ չ'արթնանայ. . . Դեռ չ'պիտի մոտանամ վերատեսակցելի Ձեզ հետ. ո՞վ Սաղիմայ բոլոր նուիրակահաւթութիւնները Ձեր անհատական հաշիւներուն գործածող ցիցեր, ու Ձեր մեզի ծանօթ արբանակները, եթէ վայրկեան մը առաջ զգաստութեան ճամբուն մէջ մտնել չ'ուզէք: Դեռ ժամանակ կայ: Առ այժմ այս չ'ափով պէտք է բաւականանալ:

ԵՍԴԵԱ

ԲԱԺԱՆՈՒՍԸ

Հեռանան Չաւակներ՝
— Հայրենեաց՝ ձագուկներ,
— Գաղարի՛ն աղիկներ,
Թափի՛ն քաղցր արցունքներ:

Բնութիւնն ա՛լ ցաւակցական եւրեւոյթ մ'դգեցած էր:
Այն օրը, արեւ ծածկուած էր խաւարաշին ամպերով, որոնք զուլա գուլա մէկ մէկու վրայ կուտակուած՝ ուժգին արշաւանքով մը կուգային իրենց արտասուազին ողբը տեղացնելու սրգայեալ քաղաքին վրայ:

Մոխրաղօյն ու տարտամ պայծառութիւն մը միայն կը տիրէր չորս կողմը, պայծառութիւն մը՝ որ բուն եղանակը մտացնել տալով՝ ցու մեկը կը շփոթէր իրիկնադէմի հետ: Հովի մեղմասող սարսուանքներու ամպ մահաւան հողեղբորքի հան-

դոյն դողահար՝ աչնան գեղնած սաղարթներու տիրահոյակ խորփաշտիւնը կ'երթար նուաղիլ հեռուէն, շատ հեռուէն, ամպամած հորիզոնէն ալ անդին:

Մեր ականջներուն տխուր կրհնէր այլեւ քաղցրախօսիկ թռչնոց դայլայլիկը, որ կը մարէր հետըզհետէ բնութեան լալկան ու կնճատ դէմքէն և սպառնալից երևոյթէն սարսուտահար:

Հոգեմաշ մեղմազնութիւնը բնութեան ծոցէն ծորելով՝ կուգար սուր սլաքներ մխել ամբարի մը՝ թագնեալ սրտին ու թախմալից հոգւոյն խորը:

Բաժանման այդ պահերը. խոցոտեալ սրտերու փարուսները, պոռթկալու պատրաստ հեծկլտուկները, իրարմէ փախչիլ ուղղակի նարկները, կրակոտ համբոյրները:

Ամիսներէ վերջ մինչև այժմ տակաւին կ'այրի սիրտս այդ տուայրիչ յուշերով:

Հազիւ արշաւաբար ծագած էր, և ահա կը կապուէին զարկաներու պայտասակները:

Քաղաքի խոնուածները գոց էին դրեթէ ամբողջն ալ, հայ և օտարազգի ամէն դառնակարգերու պատկանող անձնաւորութիւնը հաւաքուած էին քաղի զոյն կողուած տեղը՝ ուրկէ պիտի մեկնէր մեծ կարաւանը:

Առանց աննշան բացառութեան անկարագրելի տխրութիւն մը կը տիրէր ամենու դէմքի վրայ:

Մանուկ, ծերուկ, հասուն ու տղաս, եկած էին վերջին արցունք ու ցաւեր իրար խոնկելու, լալ. դողում ու գոչում:

Պատերազմական դաշտի մը կամ աւելի ճիշդը՝ բնութեան աւերիչ ու քանդիչ պատահարի մ'առթիւ ըլլալիք ընդհանրական մեծ զահարեւրումի մը կատարեալ երևոյթն ըստացած էր նոյն վայրը, ուր խրոնդուած էին մօտաւորապէս ութ հազարէ աւելի անձինք, իբր դիտող և յուզարիկ փոթացող, ի բաց առեալ դաշտիցներէ՝ օրոց թիւը առնուազն 400 կը մօտենար:

Բարեկամներ, մերձաւոր ազգականներ կուլային արկղորմ ճիշերով, մայր մը փոշի մէջ կը թաւալըկէր նուաղկոտ ու վշտակոծ, ըրր մը, անվերջ համարյոներու խածնետուկներով կը կարմրէր իր եղբոր երեսները, փետտելով իր մազերն ու բոյլ բոյլ հովի սրակելով, ծերունիները՝ որոնք այդ օրը գերազայն պարտաւորութենէ մքեալ եկեր էին վերջին համբոյրը տալու առնելու ազիտը մ'հեկեկանքներով կուլային անգաբար՝ օրհնեցանքներ յօրինելով. քանի՞նք կը վրձուէին ձիերու ստից ներքեւ, ժամը վեցի կը մօտենար ու տակաւին արարողութիւնը վերջացած չէր. — անդին, թշնամական հանդիպումի պէս մէկ մէկու օձիքէ պինդ բռնամ՝ զիրկնդխառն պրկումներով ու քաշքուտներով կը պաղատին իրարու ու չ'են ուղեր բաժնուիլ. — նորապսակ ամուսնու արցունքի ու լացի արարողութիւնն էր այն, փետան կ'ուխտէր չը մտնալ իր ծաղիկհասակ սիրականը, սարերու և ձորերու ետեւ, և հարսը կ'ուխտէր հաւատարմ մնալ իր ամուսնոյն տարիներու թուոյն մէջ, զոր, Աստուած միայն գիտէր որոշապէս համբել:

Եւ տակաւին ի՛նչ սրտառուչ տեսարաններ, աղետարչ ու սիրտբլքող ասուլիսներ, ցաւազար պոռչուտներ:

Բաժանման այդ ցաւերը, հոգեկան այդ յուսահատ հատուցները զըլալու համար, հարկ չը կայ որ մարդ դիտակից ու կիրթ ըլլայ, բնազդ մըն է այն, որ ընդամենէ՛ անբան արարածներու մէջ խկ:

Ո խոտ արարողութիւնները կարտոն, և հարկ կըլլայ որ «մնաս բարով» ու «երթաս բարովը» խեղդենք արցունքի մէջ:

Հրաժեշտի ողջոյնը բուռն շարժման և յուզման մէջ գրաւ բազմութիւնը, աւարտեցաւ գիրկըղխառն փարուսը — մեր զառամ ծնողքը թող երթայ դժուրակ ապաստանիլ քան զաւեր օճախի մութ խորշերը, այլ ևս չ'ողջունելու լոյսը և իր սգակիր սրտի խուլ հառաչանքները դաշնակին յանձնելու:

Մինչ բաւական հեռացած՝ անգուժ ջորեպանները՝ հօ, հի, կոչերով գրոհ կուտան ձիերու արշաւանքին, մենք սրտի անհասնում հեծկլտուքներով երբեմն ետ դառնալով կը դիտէինք աւերախը, որի մէջէն դեռ լսելի կըլլային գուեսանահարներու վերջին ողբերգութեանց տխուր ու մեղմազնու շեշտերը:

Մեր մայրեր ու քոյրերը բլրակի մը դարեանդին վրայ բարձրացած կուլային գոռ գոռ, մէկ ձեռքի ձգրուումով կարօտի համբոյրներ կարկառեալ մեղ, միտովը կուրծքերին ձեծելով:

Յախտեանկանութեան մէջ որ մօտ է Աստուծոյ, պիտի տեսնուինք հետերին փոխանակելով կարօտակէզ սրտի զգայութիւնը և սպասելով, միմեանց առողջսրբար համբոյրներու խանդը:

ԱՍՊԱՐ

ԵՐԱՂ

Ծաղիկից հիւսում դու երազ,
Մտես քրտար գրնայիր,
Սերս քոյրի անուրազ,
Ու վերքի պէս մընացիր:

Վառ շոյքեհու ի՛նչ մնաց,
Սիրս արիւն և քաւում,
Ձեռքովդ անգութ սրտած
Ծաղիկեհու՝ սուր քաւում:

Անպերև արցունք եւ ցօրում
Անշոյս, անշոյս իմ ձաւրեւ,
Մուրք սիրս և սօղում
Ձաւրեւ անդրած՝ սիրոյս պէս . . .
(Յուշարար) Ա. ԻՄԻՆՉՈՒԿԵՆ

ԿՈՎՈԱՍԵԱՆ ՍՈՒՐՅԱՆԴԱԿ

«ՄՇ Ա. Կ. Ի. Ե. Մ. Ա. Կ. Ա. Կ. Ա. Կ.»

Ճ — Աղբյուրեալ Պ. Արիխայի Յուշարձանին համար «Մշակ» ի խրոբ. բազրութեան ստացած նուիրատուութեանց գումարը հասած է 345 թուրքի: (Տե՛ս «Մշակ» թիւ 81 Ապրիլի 17):

Ճ — Հասարակական գործիչ և մեծանուն վիպագիր Հանգուցեալ Պերճ Պրոշեանի թաղման և հողակոյտին վրայ արձան մը կանգնեցնելու համար Բժշկապետ Բ. Նաւասարդեանի նախագահութեան ներքեւ կազմուած Յանձնաժողովը մինչև Ապրիլի 8ը 275 թուրքիի նուէրներ ստացած է, ուրկէ թաղման ամբողջ ծախքերը զեղջելով կը մընայ 67 թուրքի Գանձապահին քով,

որ՝ մահարձանին պիտի յատկացուի: Նուէրներ կրնան զրկուիլ Բժշկապետ նախագահին և Ա. Ահարոնեանի հասցեով:

Ճ — Մէրկէն 26 Մարտ թուական «Մշակ» ին ուղղուած թղթակցութեան մը մէջ հետեւեալ ուշադրաւ մասերը կան:

«Մէրկում օրվայ խոսակցութիւնը ենթադրելի Ռուս-Թիւրքական պատերազմն է:

«Քաղաքիս հայերն ալ այս օտար երկրում, ինչպէս կ'ըսեն՝ միմիանց միս են ու սուր իրանց դժուր շահերի համար և վնասում են բարեգործական հիմնարկութիւններին:

«Մարդասպանութիւնը դրամաչորթութիւնը և այլ յանցագործութիւնները, որոնք անտեսապէս ու բարոյապէս քայքայում են ժողովուրդին, սովորական են դառել:

«Այս շարիքի դէմ չ'են մտածում ընդհանուր ուժով կուռելու, այլ ընդհանրապէս մէկի թշուառութեան վրայ ուրախանում է միւսը, կամ շատ շատ՝ քունջ ու պուճարներում կրամբասում են, հայհոյում այս կամ այն կուսակցութեան:

Ճ — Լաղարեան ճեմարանի մասնադիտական գասարանների խորհուրդը իր 1908 Մարտ 13 ի նիստին մէջ զճառ է յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երեք նիւթերը՝ երեք մշտնապիսի համար, մէկը 700 թուրքի և երկուսը 500 ական թուրքի:

1. Բարբառագիտական բառարան հայ լեզուի:
2. Մուշի և Աստուրի հայ ժողովրդի մանրամասն ազգագրական նկարագիրը:
3. Էրզրում Գաւառի հայ ժողովրդի մանրամասն ազգագրական նկարագիրը:

Աշխատութիւնները կարելի է գրել՝ Հայերէն կամ Ռուսերէն, Թրանսերէն կամ Դերմաներէն:

Աշխատութիւնները պէտք է ներկայացուին Լաղարեան ճեմարանին 1910 Ապրիլի 10 ից ո՛չ շատ ուշ:

Մասկուայի թղթակիցը Պ. Մ. Շուրբան խորհրդածութիւններու շարք մը աւելցնելէ յետոյ վերագրեալ յայտարարութեան մասին, կեղբակացնէ:

«Դարձեալ՝ մրցանակը պահանջում է Մուշի և Էրզրումի հայ ժողովրդի մանրամասն ազգագրական նկարագիրը, որ շատ ցանկալի է տեսնել. կ'սպասենք, Բայց Մասուրը. . . որ տեղ է Մասուրը. . . նրա ուր լինիլը պէտք է հարցնել հայ յեղափոխականներից. . .

Ճ — Վանէն «Աղբերանց-Արիւն» 11) 24 փետր. թուականաւ հետեւեալ նամակը ուղղած է Մըշակին:

«Սովի աւերները կարծես քիչ էին այս դժբաղդ ժողովրդին տանջելու, ազգական պատրաստութիւնները կարծես պակաս պատուհաս էին դարձած մեր գլխուն, հարկահաններու կեղեքումները կարծես պակաս տեղ էին թողուցել ժողովուրդին դառն վիճակին մէջ:

և հաճախ խմբակի անհեռախոս գործունեությունը ծնունդ տուա մի հրեշտային դաւաճանութեան : Երկիրը դարձեալ ա՛հ ու սարսափի մատնուեցաւ , երկու դրացի ժողովուրդներն ցեղական ատելութիւնը որ բորբոքուեցաւ շնորհիւ կրօնամօլ պրօֆօկատորներու և ածիտատորներու 1896 ի սե օրերու ուրուականը պահ մը նորէն երեցաւ և ամէն ոք աճապարեց իր գլխին ազատելու ճար մտածել : Հակառակ ձմեռնային այս անտանելի սառնամանեաց, բազմաթիւ ընտանիքներ հիւպատոսարաններու բակերն ու այգիները թափուեցան իրենց մանուկներով և տուն ու տեղով , ծնունդ տալով աղետարն տեսարաններու և զանազան մահացնող հիւանդութեանց : Մօտաւորապէս հարիւրէ աւելի զոհեր եղած են :

Դաշնակցութեան ամենէն վրտահեղ մի գործիչը , որ սահմանագլխէն հոս իր հակողութեամբ և այս տեղէն ալ մինչև թաքստոցները իր կռնակով պէնք ու մթերք կը փոխադրէր և ամէն ինչ էր այդ կազմակերպութեան համար , այս Տհերցի Կառն , քրդուած մի զոհուելի դէպքից , օտնատակ անելով ամէն բան , թաքստոցները բանալով մէկիկ - մէկիկ կառավարութեան յանձնեց ամէն ինչ մօտ 450 հրացան և տասն կրականոց ատրճանակ և քանի մը տասնեակ հազար փամփուշտ :

ԽՐԱՎԳՐԱԿԱՆ ՁԵԿՈՑԸ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

« Արշալոյս » ի Աղէքսանդրիոյ ԼիւձՅՈՐ Գործակալ - ներկայացուցիչն է Տիար Յ. Տուրուսեան թուականէս մինչև ներկայ առաջին շրջանի աւարտմամբ : Այսինքն 308 Դեկտ. 31 , և վերնորելի է :

Ծանուցմանց , տպագրութեանց բաժանորդագրութեանց և նիւթականի հետ կապ ունեցող առևտրական բոլոր ինքրոց համար կարելի է համաձայնել իրեն հետ , և վճարում ընել « Արշալոյս » ի Խմբագրութեանէն կնքեալ և Գարտուղարէն ու Մատակարարէն ստորագրեալ ստացականներու փոխարէն :

Առանց վերոյիշեալ ստացականներուն եղած վճարումներու համար Խմբագրութիւնը ո՛ր և է պատասխանատուութիւն չ'ստանաներ : 1-3

ԱՂԵՔԱՍԱՆԻ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ

Յունիս 6) 24 ի Եարթ գիշերը Մահմանդրութեան 48 րդ տարեդարձին առթիւ թատերական , զբոսական ու երաժշտական սիրուն հանդէս մը տեղի պիտի ունենայ ի նըպաստ « Մանդուխտ » Ընկերութեան : Ինչպէս գիտենք , սոյն Ընկերութիւնը գրեթէ տարիէ մ'ի վեր հիմնուած իր գոյութիւնը կը պարտի մէկ քանի եռանդուն ու գործունեայ Օրիորդներու ազնիւ նախաձեռնութեանը նպատակ ունենալով Հայաստանի աշխարհ վարժարաններու նիւթական միջոցներով օգնել ինչ որ մեծ պատիւ մըն է իրենց :

Կը յուսանք որ Գահիրէի Հայ հասարակութիւնը նկատի ունենալով « Մանդուխտ » ի օգտակար դերը և հիմնադիր Օրիորդներու կողմէ եղած ջանքերն ու զոհողութիւնները , և մ'անաւանդ տեղի ունենալիք հանդէսին ճոխ յայտագրերը՝ չը պիտի յապաղի իր ներկայութեամբ և զբոսական ձեռնտուութեամբ քաջալերել « Մանդուխտ » ի բարի նպատակը և անոր տակաւին մատղաչ ու վարանտ քայլերը :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԻՔ

Հայ պատանեաց ընկերացաւորաց « Բաֆֆի » Ընկերութեան Դիւանին կողմէ նամակ մը ուղղուած է մեզ , որով նորընտիր Դիւանին և Գործ. Ժողովով ընտրութիւնը կը ծանուցուի : Ընտրականները թէև ախտոյժ , եռանդուն , և թերևս գործունեայ ալ , բայց տակաւին անփորձ պատանիներ են : Կամ շատ շատ երիտասարդութեան տարիքին առաջին աստիճաններուն վրայ դեռ նոր գրած :

Ընկերութեան կանոնադրերը և ծրագիրը անձանթէ է մեզի , բայց քանի մը կարևոր անց ու դարձեր որ այդ ընկերութեան կազմութեանէն ի վեր տեղի ունեցած են , և անպաշտօն կերպով մեր ականջը հասած , վարանու մի կը մատնեն մեզ շատ համակրութեամբ խօսելու այդ ընկերութեան մասին : Կը յուսանք թէ յետ այսու նմանօրինակ անպատեհութիւններ տեղի չ'են ունենար :

Պատանեաց ընկերութիւնը պէտք մը կը նկատենք , Կալստեան երկսեռ վարժարանաց յարգելի Տնօրէն Տ. Կ. Թուրքանի տուած հաւաստումները ի նկատի ունենալով (տե՛ս բացթեայ հանդէսի նկարագրութիւնը) Սակայն նոյնպիսի և աւելի անհրաժեշտ կը նըկատենք որ գոնէ այդ պատանիները դայթումներէ զգուշացնելու համար , տարեց , փորձառու , բանիբուն և պարկեշտ անձերէ կազմուած ըլլալ ընդհանուր Դիւանը , և Գործ. Ժողովոյ մէկ մասը գոնէ , այն ատեն աւելի վստահութիւն կրնայ ներշնչել ընկերութիւնը և պատանիներն այ կրկնակի օգուտներ կրնան քաղել իրենց կրօնցուցած ժամանակներէն : Այլապէս այդ կերպով մը դպրոց - ընկերութեան համար եղած ծախքերը և զոհողութիւնները ո՛չ միայն անօգուտ տեղը վատնուած պիտի ըլլան , այլ և մէկ քանի տեսակէտներով ալ վնասակար Տեսակէտներ՝ որոնց բացատրութիւնը տալ զանց կրնենք :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՆՈՐՀԱԿԱԼԻՔ

« Ժուրնալ տիւ Դէս » կը գրէ . եզրագրացի չորս բարձրաստիճան անձնաւորութիւններ տեղւոյ Պրանսական Հիւպատոսարանը գացին իրենց ինչպէս իրենց երկրացիներուն անունով շնորհակալութիւն յայտնելու համար այն հարիւր միլիոն փոխատուութեան համար զոր Պրանսա ըրած է Գրէտի Թօնսիէ գրամատան : Պրանսական ներկայացուցիչը , խիստ զգացուած այս ցոյցէն , ըսաւ թէ ինք մեծ բաժին մը ունեցած չէր այս գործին մէջ ու միայն բաղձանքը սա եղած էր որ Պրանսական գրամատները կամենային թեթեւեղեղ Եզրագրական տալու , թէ պէտ ինքնին առժամանակեայ : Մ. տը Վոլտրօմ աւելցուց նոյն .

պէս , թէ եզրագրացի վստահ թող ըլլան որ Պրանսա՝ միշտ հաւատարիմ մնալով իր աւանդութիւններուն՝ պիտի անտարբեր չի մնայ եզրագրացի ներկայ անձնութիւններուն և թէ պիտի շարունակէ կատարել իր դերը , թէ մտաւարական և թէ գրամական տեսակէտով :

Բ. ԽՏԻՎԸ

Ն. Բ. Խախիլը իր ուղևորութեան առթիւ Նախարարապետ Վ. Մուսթաֆա բաշա Թէհմին փոխանորդ պիտի նշանակէ մասնաւոր հրովարտակով : Եւ որովհետև Ն. Վրսեմութիւն Նախարարապետն ալ մօտ օրերու մէջ Եւրոպա պիտի մեկնի , անոր գործերը պիտի վարէ Վսեմ Թախիլ բաշա :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Անկիրս 21 Մայիս - Գօթիչի մեջ ձկնաբացը ուրիշ կատարուելի մը յետապնդմին զարնուեցաւ :

79 վիրաւորեալներ կան եւ 38 ըսպանուածներ : Սեֆ շեղուն կամեր կսոր կսոր եղան եւ ճակատողները մահացու վերքեր ստացան :

Պօսիկ 21 Մայիս - Զօրավար Վիլֆօֆսի բանակաւորին 19 ի կես զիշերին յարձակում կրեց , Կարի յանդուգն քշումիները ձորակներէն սողալով յարաբացան բայց անուղիկ ունակ սուրիկ հարուածներով սպանուեցան :

4. Պոլիս 21 Մայիս - Նախարարաց խորհուրդը Պարսաի երկարադիւն չորս նոր գծերու յաւելումը որոշեց , Անուղիկ միկ և Պուլիուրուէն միկ յետ Սիլիֆ որ Մեքսիկէի գծին ճիւղաւորուան կայանը պիտի ըլլայ եւ սարածօրինը 840 իրօները :

Նախարարաց խորհրդոյն այս որոշումը Գերմանիոյ շահերուն շատ նպաստող կը համարուի :

4. Պոլիս 22 Մայիս - Հիմազի կացութիւնը մտահոգաբար կը պատճառէ : Պեքիլիները երկարադիւն կայանին վերայ յարձակած են , Իսլամական ուրբ վաշտ օրք որկուեցաւ :

Բեքիլիներ 22 Մայիս - Պարսիկ կառավարութեան ներկայացուցիչը սասն եւ հիեզ օրի չափ պայտանամալ խնդրեց Պ. Իզվոլսկիէն , սահմանագիւի սուղապները պատճառ եւ սուղակ մը վճարելու համար : Միեւնոյն սեկն պատանդուց թէ՛ Պարսիկուսան որոշած է պէտ եղած միջոցները ձեռք առնել այս մասին : Պ. Իզվոլսկի յիշեցուց թէ՛ ինք ֆանիցս խնդրած էր պարսիկ կառավարութեան որ սահմանագիւի գեղերուն վրայ հսկողութիւն կատարէ :

Ս. Բեքիլիներ 22 Մայիս - Բոլոր կուսակցութեանց քերթերը շուտ տարաբարութեան մեջ են Եզրագրացի բազմութիւն մօտապէս այցելութեանը համար եւ կրնան թէ՛ այս այցելութիւնը երկու երկիրներու մտերմական կապերը պիտի գորսցնէ : Բաղափական մեծ դէպքի մը կը վերագրեն բազմութիւն այս այցելութիւնը , որ Պ. Թախիլիկ Լոնտրա ըրած այցելութեան կը նե՛տի :

Ս. Բեքիլիներ 23 Մայիս - Զարը ընդունեց պարսիկ կառավարութեան խնդրած պայտանամալը սալ , պայտանամալ որ կատարեալ գոհացում տուի Ռուսիոյ :

4. Պոլիս 25 Մայիս - Իսլամական հիւպատոսարանը եւ Յոյն պատրիարքարանը մը կը պատահուին Ս. Կասարիկեայ կայրպոլսի պատահարին համար վնասահասցուել պահանջելու : Ս. Բեքիլիներ 25 Մայիս - Բարդ եւ իր մերսակիցները մահուան դատապարտուած են : Զորքը ճաճակալի աշխատութեան , երկուք վստահուի եւ մեկը սպան թողուած է :

Լոնտրա 25 Մայիս - 13 գրամատուներ , 8 պատերազմական եւ խուրճ մը քորիլիսական Պ. Թախիլիք բարեկերու համար Տուրիկ ներդրել մտան :

ԲՆԱԾԽԱՐՀԻ ԽԱՐԻԿՆԵՐ

Տ. էն հասած նամակէ մը քաղուած է առանց փոփոխութիւններու :

Ապրիլ 18

... Գիւղին վեճակը քեզի իմացնեմ որ գիւղերնուս մէջ տարբ տուն ու տեղիք կը գտնուի ան ալ օր մի ունինէ երկու օր չունի եւ բոլոր տուները նացած փեթակի կը նմանի եւ գիւղին վերայ նայիս ամբողջը վերանայ է , ինչու որ քակեցին եւ կը քակեն ու կը ծախեն անթուրեան պատճառաւ , մենք ալ անոնց հետ հաւասար ենք , ինչու որ գիւղեր եւ ցերեկ կուգան կուգին մեծ եւ պզտիկ ալ ամչնալը վերցաւ . անոր համար մենք ալ անոնց հետ օր մը անթի օր մը կուշտ բայց ինչ կրնանք ընել . բայց զուն պիտի ըսես քի այսչափ փարա կը դրկեմ ինչու՞ և զուգ ալ անոնց հաւասար կըլլաք : մենք ալ ասոր համար կըլլանք որ գիւղեր ցօրեկ մեծ պզտիկ ուզողին տալով չենք կրնար իտար ընել . սիրելիս , մի՛ մեղադրել , Աստուած քեզի տայ զուն ալ մեզի տաս մենք ալ յետին աղքատներուն տանք : Գիւղին խեղճութիւնը Աստուած չի ցցնէ ասանկ օրեր , այնչափ նեղացած են որ ստակաց քոռիաներուն միտք եւ ստակած կովերուն միտք ստակած հօրթերուն միտք կուտեն , եւ գիւղեր ցօրեկ արտերուն մէջէն խոտ եւ աղցան կը յողմեն էրեկ մարդ կնիկ ձարք օլուխ ու չօճուխ այնչափ անթութիւն կայ գիւղերնուս մէջ : Աստուածոյ ողորմութիւնը հասնի :

ԴԻՒԹԱՐԵԱՆ ԳՈՐԾ. ԳԱՀԻՐԷԻ

Գործակալութիւնս խորունկ ցաւով կը ծանուցանէ թէ՛ « Գիւղունի » ի նրատարակութիւնը , ինչ ինչ հակնալի պատճառներով , այլեւս դադարած է :

Հետեւեալ օր « Գիւղունի » ի հաւաքածոյն ունենալ փափաքողներ կարող են օգտուիլ մեր քով գտնուած օրինակներէն , մանաւանդ 1906 ի թիւը , որ գրեթէ ամբողջովին սպասած է :

« Գիւս՝ մեռիք՝ եկու սիրեմ քեզ : »

ՎԵՐՋԸԹԵՐ ՆԱՄԱԿՆԵՐ

Աղէք . Ա. Խմբագրութիւնը յանձնը չ'առնելու այդ կնճառից խնդրոյն միջամտել , քանի որ հոտ Հողաբարձութեան կան , քանի որ Աղգային Ժողովներ կան , Նախ անոնց գիտեցէ՛ք , յետոյ երբ պէտք եղած ուշադրութիւնը չի գարձուի անոնց կողմէ , այն ատեն կարգը մեզի կուգայ :

Երբէք մի՛ ցաւեք այսպէս վարելուս համար , որովհետեւ արժանապատուութիւններ չօգտուած են Զեր տողերուն մէջ :

Աղէք . Վ. Բ. - Ետտ ու շատ սիրուն եւ յաղորած է « Ա՛խ Մայրիկ » ը. յարմար առթիւ մը պիտի հրատարակուի . ջանացե՛ք այդ ուղղութեամբ նորեր պատրաստել : Նմանօրինակ զբոսութեանց համար մեր էջերը բաց են :

ԲԱՅՕԹԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Պատանեաց Ընկերացաւորաց « Ռաֆֆի » Ընկերութեան 4 րդ . տարեշրջանի գոյութեանը տարեգարձին առթիւ Հանդէսը՝ տեղի ունեցու . անցեալ կիրակէ կէս օրէ վերջ իր յեղեղական սրահին պարտեղը :

Նախապէս հրապարակուած յայտարարին պարունակութեանը համաձայն « Տէր կեցո » խմբագրէն վերջ , Հանդէսին Նախագահ Տ. Թուրքան , ըստ պատշաճ սովորութեան ներկայացուեցաւ հանդիսականներուն , որը՝ բացման խօսքը արտասանեց : Տ. Թուրքան Աղգ. Գալստեան վարժարանի յարգելի Տնօրէնը , ներկաներու հանդէսը բացաւ ,

նախապատրաստուած շատ գեղեցիկ ու ներհուսն բանախօսութեամբ (*) մը որը կը խտացնէր իր մէջ համազօրութիւնը ու վերլուծութիւնը ուղղութեան եւ գործունէութեան հայ պատանեկան գիւրթի մէջ աշխարհիկ կեանքին :

Ներկայ պատանեկութիւնը միմիայն մէկ սկզբունք ունենալու է ըսաւ, անհատական ինքնազարգացում - որը պէտք է հիմնուած ըլլայ հայկական տոհմային ճշմարիտ դաստիարակութեան վրայ, եւ պէտք է զարգացուի իր բարձրագոյն կատարելագործումին մէջ, առանց գրպուածին կամ տարրեր ազդեցութիւններուն տիրապետումին ներքեւ մտցնելու, Ռաֆֆին, Արծրունին Միրենցը եւ այլն, որոնք անցեալ անհետացող հայ կեանքին մարմնացումները եւ փառքը եղան, թող ներկայ պատանեկութեան ուսումնասիրութիւնները եւ կեանքի ուղղութիւնները ըլլան, որովհետեւ, ատենք էն անկաշառ եւ խղճաւոր վերլուծութիւնները, հրահանգիչ եւ դաստիարակող միակ արտադրութիւններն եղած են, նոյն իսկ ներկային համապատասխանող, Ատոնց ընտանի յարաբերութեան մէջ է որ պիտի ստանանք բաներ մը անոնց նըկարագրի ազնուութենէն եւ ներշնչուածն :

Ամէնութեան մէջ միմիայն Լէօ մը ունինք, որը կրնայ անոնց յաջողութիւնը յաւերժացնել իբր ինքնուրոյն, իր ժամանակին ուսումնասիրող միաբանքը : Ուրիշներ, որոնք երբեմն որ լոյս կը տեսնեն, արդէն ատոնց լրացուցիչ բովանդակութիւնները մեզի սուած են ժամանակի մեր երջանկայիշատակ գրագէտները :

Յարգելի բանախօսին վերջաբանը եղաւ նշանակալից եւ բովանդակող նախադասութիւն մը, նախ ձեզի համար աշխատեցէք՝ յետոյ ուրիշներուն :

Պարբերաբար երգերէ եւ արտասանութիւններէ վերջ, օրուան ատենախօսը Տ. Արմենակ Ատիւնան, խօսեցաւ Պատանեաց Ընկերութեան 4 տարուոյ գործունէութեանը մասին, ամփոփ բացատրութեամբ, ընկերութեան առած ամէն մէկ յաջողական քայլերը ներկայացուց, եւ յոյս յայտնեց որ՝ ասկէ վերջ ալ աւելի կազմակերպուած, կանոնաւոր ու զօտեպնդուած դրութիւնով մը պիտի ընթանայ :

Արդէն հրապարակուած ինչպատ ընկերութեան վիճակահանութենէն յետոյ, ձեռնարկուեցաւ մամլամարզի փորձերուն : Մարմնամարզի փորձերը յաջող տպաւորութիւն մը ձգեցին ընդհանուր առմամբ, ներկաներու վրայ : Այս անգամուանը ուրիշ հանդէսներէ աւելի ճոխ փորձերու յաւելումը կը նկատուէր :

Նոյնպէս 10 ը վարկեանի չափ տեսնող գօտեմարտութիւն մը տեղի ունեցաւ, Երկու գեղանահա բայց՝ լաւ մարզուած պատանիներ, կատակող կորիւններու տապալակումին պէջ, յամառօրէն՝ փոխն ի փոխն գիրար տապալեցին, արհեստին պայմանագրական յաջողութիւնը ձգելով Պ. Յակոբ Սէմէրճեանին : Հանդէսին ընդհանուր գոհացուցիչ տպաւորութենէն ազդուած, յարգելի Տնօրէնը փակման խօսքով մը իր հիացումը եւ նոյնպէս ցաւը արտայայտեց : Ըսաւ թէ կը հիանայ, որովհետեւ, պատանիներու այս տեսակ խմբակցութիւն մը, առաջնորդող ձեռքերէ վերած, միմիայն ինքնօգնութեամբ, գոհացուցիչ յաջողութիւն մը ունենալը, արդէն զբաւակարան մըն է, այժմէն ապագայի յուսադրիչ ճոխ ակնկալութիւններէ ներշնչուելու :

Իսկ ցաւ յայտնեց անոր համար որ՝ Եգիպտոսի պէս երկրի մը մէջ, ուր զԵ-

րամատէրը, մտաւորականը կղերականը եւ այլն, որոնք մեծ հեղինակութիւններ ունին, ինչպէս կը ըլլայ որ չեն հետաքրքրուած մինչեւ հիմայ, եւ նոյն իսկ չեն ուզեր ալ հետաքրքրուիլ, եւ քաջայերեւ այս տեսակ պատանեկան հաստատութիւն մը, որը՝ ապագայի հասարակական Հայ կեանքը պիտի ներկայացնէ :

Հանդէսը փակուեցաւ Երկուստ հանդիսականներու խոսքով : Բազմութիւնը չափազանց գոհ տպաւորութեան մը ազդեցութիւնը կրեցին իրենց մէջ :

ՆՇԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

14 Մայիս 1908
Գահիրէ

ՄՏԵՐՄԱԿԱՆ ԽՕՄԻՆԻ

Ս. Օ ին

« Արշալոյս » ի հասցէին վրան գըրած « մեղքը վիզս եմէ խնդաս վրաս » չարածճի բառերը կարգաւոր՝ կոտորեցի թէ բան մը ներփակած ըլլալու ես թերթին . ու բացի, գտայ եւ կարգացի :

Հաւատք ի տողերու՞ վրայ պիտի խնդայի արդեօք, եւ ինչո՞ւ, ո՞վ կրցած է դեռ վճռական փաստը բերել մեզի էականութեւ ծագման մասին, այն թէ պէտ խիստ շահեկան ու հմտալից հատորին մէջ զոր դու կը յանձնարարես կարգալ՝ տգէտ չի մնալու համար :

Ինչո՞ւ խնդայ ուրեմն, եւ չէ՞ որ « ի յաւելուածոյ սրդի խօսի բերան » : Բոլոր ազնիւ միջոցները՝ ի շինութիւն աւեր-աւերակ Հայրենիքին, յանդորրութիւն եւ ի բարգաւաճում տարաբաղ շայ ազգին լաւ են, լաւ :

Երանի՜ թէ քեզ եւ քեզի պէսներուն տրուէր անպարտոյ միջոց, ոչեւորելու, խրախուսելու եւ զէպի իտէալ մղելու համար ազդերու զժապտագոյնը :

Երբ Գոյունեան Գերապայձառի եղած ընդունելութեան հանդէսին նկարագրութիւնը կարգացի, կը ցաւիմը սել, խորապէս զգածուեցայ. Հայ եկեղեցւոյ մը մէջ, հայ եկեղեցականի մը բերնով . . . գաղղիբէն լեղուած . . . բարի՜ գալուստ . . . Լու՛ր երկին եւ ունկն դիր երկիր :

Քրիստոնեայ ենք, « չիք խտրի հրէի եւ հեթանոսի » լաւ, բայց մե՛նք միայն մե՛նք ըլլայինք պիտի այսքան խելայիզ ջոշատը :

Ուստի սիրելի՛ս, ամեն առիթներով մշտէ Գոյունեան Գերապայձառը, յիշեցուր իրեն այդ ազնիւ ու օրինակելի թելադրութիւնները :

Բայց զգուշացիր, մի գոցէ « ազգասէր պարոններու » կարգը անցնէ քեզ ալ բարեկամ Արամհայրը Ա. Պալեան :

Իրեն հետ վիճաբանութեան բռնուելու սնամէջ շոյովանքովը չէ որ զբրեցի քեզ առջի նամակս, որուն պատասխանը կարծեմ ըլլալ այն հատուածը՝ ուր Լրդուս Պոլիոէն էն խօսքեր մէջ կը բերէ իր յայտնութիւնները հաստատելու համար :

Լրդուս Պոլիոէն ներհուսն ու գիտուն մարդ, ու հայասէր ալ, գիտենք այդ . սակայն . . . :

Կան որ դեռ իրագործելի դեր մը, քաղաքակրթիչի դեր մը կը վերագրեն մեզի :

Ու կան ալ որ խերերնիս կանիծեն, սեղէ հոնա միջոց կը սահմանեն, Երեւանի փոխն մեջ հողին ընկեր եւ որդին կեր ըլլալու համար, որուն հաւատալ :

Բոլոր այս անխուսափելի խորքանց հանդէպ ի՛նչ հարկ կար տաղակալի հըռընդիւններու . լաւ չէ՞ որ սա հոգեվարքի ցաւատանջ գալարուններէն զերծ ձուլումի, զնշումի անդորրաւէտ շքանին սպասէինք :

Այս ձգտումները, այս ակնկալութիւնները ի զու՛ր են, բըռնազբօնի՛կ են իրաւ հին տիկն ենք նոր գիտնիւրու համար, ինչպէս կ'ակնարկէր ուրիշ յօդուածի մը մէջ ալ : Մեր ազգային խմորին մէջ ինքնուրոյնութեան գէթ մանրադիտական կորիզ մ'անգամ չիկայ . . . :

Ուրեմն, « ո՞վ ինչ ո՞վ է մեղաւոր » թող արարչագիր կամ բնական օրէնքի - չէ՞ որ բնական օրէնք մըն է ազգերու ձուլում - անէպարտմը - եսխալեմ բունն, անոր երեսին տան անարդար տնօրինութիւնները եւ ոչ թէ ըստգտանեն ցեղ մը որ յանցանք մը չունի, ու բնութեան օրէնքը յեղաշրջելու ուժը չունի :

Իրաւ, « Ազգ գայ եւ ազգ երթայ » բայց միայն հայ ազգը չէ որ եկած է ու պիտի երթայ, Լրդուս Պոլիոյին ազգն ալ պիտի երթայ :

Չէ՞ որ Լուսա Պոլիոն կ'ըսէ, - արդի հզօր ցեղերը յաւերժանականի ապահովագիրը ունին ձեռուներն : » Մեր թերութիւնը նշաւակել ուղելով մեր ճակատագիրը, կարգաւ կը մնայ դամբանականը :

Իրմէն չ'սպասուած, չի յուսացուած բառերով իր հատուածը զարդարած է « ազգասէր պարոններու » կծուանոյ ձեզնանգովը :

Այսպանելի բան մըն է ազգը՝ հոգ չէ թէ պղատունական սիրով, սիրելու իր « ժողովուրդ » ովը իր մատենագրան » ներովը ուրիշ ի՛նչ կէտ նպատակի ունէ՛ր եւ ունի՛ր արդեօք :

Պիտի ըսէ, վտանգը մատնանշելով կանխարգել միջոցներ կուզէի թելագրել լաւ, բայց . . . բնութեան օրէնքը պիտի տկարանայ՝ մեր միջոցներուն տոկոսներեանը առջեւ : Դուք ես պահպանողականութիւնը ու դաստիարակութիւնն ալ անզօր չէ՞ք նկատեր անյեղի օրէնքի մը հանդէպ :

Պիտի առարկուի, խլուած վայրկեաններն իսկ յաղթանակներ են օրէնքին զէմ :

Ու այդ վայրկեանները յաւելուածները պիտի ըլլան տուայտանքներու, տաղտապանքներու նուազկոտ շիջումներու . . . մեռնի, հալի պիտի մեր ցեղը : Ե՛ւ . Այսպէս՝ պիտի մտածենք : Ահա արդիւնքը իր մերկացումներուն, յայտնութիւններուն . . . :

Բայց ըսէ ձգտումը, սիրելի Ս. Օ. թող արդիւնքը պատրանք ըլլայ, հոգ չէ, ամենէն աւելի օրինակելի ու ազնիւ է :

Ա. Մ

Աստուծ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԹԻՒ 536
Գահիրէ 1)14 Մայիս 908

Առաջնորդարանս՝ ըստ որոշման Ազգային Գաւառ . վարչութեան Պատ . Քաղաքական Ժողովոյ՝ այս սու կը յայտարարէ թէ ամսուս 13)26 ին Երեքշաբթի, առտուն ժամը 9 ին, ի խան - խալիլ ճէվահիրճի վիւքալէսին մէջ, Հանգ . Յովհաննէս Պէյ Նախնուխի որդւոյն Առաջնորդարանիս պատուիրակին միջոցաւ եւ հրապարակային աճուրդիւ պիտի վաճառուին Հանգ . Տիկին Աննիյա Նախնուխ Պէյի թէրէքէին վերաբերեալ կանանց գործածութեան յատուկ գահարեղէններ՝ ինչպէս մատնիներ, ժամացոյցներ, ժամացոյցի շղթաներ, մանեակ, օղ, գնդաւակ, ամենն ալ ականակուռ . նաև պարզ սկզբայ ժամացոյց մը, ազամանքներու մերկ

կտորներ եւ արծաթեղէն առարկաներ :
Վաճառումը կանխիկ դրամով է եւ 3 առ հարիւր միջնորդչէքը զնոզին կողմէ պիտի վճարուի :
Գնել փափաղողը կը հրաւիրուին նոյն օր, որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ վաճառման վայրը :
Առաջնորդ Եգիպտոսի Հայոց ՄԿՐՏԻՉ Ծ. ՎՐԴ. ԱՂԱԻՆՈՒՆԻ

ՍԵՂԱՆՍՒՌԱԿԱՆ ՏՈՒՆ

— 0 —

Մուսի փողոց թիւ 6, Սիկերի մասնա-

ճիւղին Բով, Ժիւսքերի դիւնաց .

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրէտի Ֆօնսիէի հին եւ նոր, Րուսիէի երկաթուղեաց եւ Բանամայի Ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիստ նպատաւոր գնորդն կրնան օգտուիլ Եգիպտոսի մեր ազգայինները մեզի գիտնուլ :


Մասնավաճարներով - 25, 50, 100 - կարելի է արժեթղթերու տիրանալ, եւ մասնիկ պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործանութեանց, եւ տեւտրական ամեն կարգի Պոնտիք զեղջիւու պատրաստակամութիւն :

Սեղանաւորական եւ Պօստայի գործանութիւններ եւ այս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին :
12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

ԹՈՒՐԻՍՏ ՄՅՈՐ
(TOURISTS' STORES)
Նուպար քաջա փողոց՝ Խիլիպ 0-
թիւն դիւնացը



Քըրօսէթ "Crossett" Ամերիկայի լաւագոյն գործարանն է . դիմացկուն եւ հանգիստ կօշիկներու . որոյ Եգիպտական միակ ներկայացուցիչն է
ԹՈՒՐԻՍՏ ՄՅՈՐ . 19-43
ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՐՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԵԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅՍՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարեթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարեթներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարսկական ամենաբարձր թէմպէրի ալ և ալ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբ անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԵԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Ն Ս Մ Ս Վ Ա Տ Ո Ւ Փ

Գահիրէ . Սիւլ . - Ստացուած է Ձեր գրութիւնը . Ինչպէս անոր վերնադրէն եւ Ա . էն կարիւրի է հետեւցնել, անիկայ իր յաջորդներն ալ պիտի ունենայ :

Ձեր շօշափած հարցը խիստ կարևոր է եւ շօշափելի ըլլալու ամէն իրաւունք կը վայելէ ինքնին :

Ի մտոյ թերթին ծաւալը ընդարձակելու առթիւ, այդ հարցին համար զատ զլուր պիտի բանանք եւ շատ ընդարձակօրէն պիտի զբաղինք անով : Բայց մինչեւ այն ատեն Ձեր անգործ չ'թողելու համար՝ երկու առաջարկ Ձեր ուշադրութեան ներկայացնելու պէտք կը տեսնենք : Մին՝ այդ հարցին շուրջ Ձեր գրած յօդուածաշարքը Ա . էն մինչեւ Ֆ . աւարտել եւ Խմբագրութեան արամադրութեանը ներքեւ գնել պատրաստ Յետոյ՝ աւելի մտէն լրջօրէն եւ ձեռնհասօրէն ուսումնասիրելու համար Ձեր շօշափած հարցին յարակից բոլոր պատահելիքներն ու անպատահելիքները, պէտք է որ այդ կեանքին մէջ ապրիք եւ կարծենք մինչեւ Ձեր յօդուածաշարքին աւարտումը՝ ժամանակ պիտի ունենաք մեր այս առաջարկը՝ ըստ Հայաստանեայց եկեղեցոյ թոյլտուութեանց՝ լրացնելու : Այնուհետեւ կը տեսնուիք :

Ձեր ուսումնասիրութիւնները աւելի հաստատուն կուտանի վրայ գնելու համար մի՛ մոռնաք նաեւ մեծահրուշակ վրայադիր Ա . Տիւմայի սա հատուածը . « la femme a été créée pour notre perte et c'est d'elle qui nous viennent toutes nos misères . »

ՎԻՃԱԿԱՅԱՌԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՍԵՂԱՎԱՐՈՒՄ

ՄԱՅՐ ՀԱՅՍՏԱՆ

ՄԵՏԱՔՈՈՎ ԲԱՆՈՒԱԾ 400 քիւն քաղկացած ԹԻՒՐ 5 ՂՐՇ . ՈՂՁ

Մեծ արձարան Հայկականի մէջ ի ցոյց դրուած սոյն աննման մետաքսեայ ձեռագործի վիճակահանութիւնը՝ որուն անցեալ Փետրուար ամսոյ մէջ տեղի ունենալը ծանուցուած էր, բայց ինչ ինչ պատճառներով յետաձգուած է . անոնք որ սոյն չքնաղ զարդը ունենալ կը ցանկան, ժամ առաջ թող զիմեն « Արշալոյս » ի տպարանը Տ . Գէորգ Փափուկեանի՝ մնացեալ սակաւաթիւ տոմսերէն գնելու համար, որմէ անմիջապէս յետոյ տեղի պիտի ունենայ վիճակահանութիւնը Հայկական արձարանի մէջ կանխաւ ծանուցուելով :

ԺՈՂՈՎՈՐԻՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

- Թիւ 1 Թրքուէին 50 սանթիմ
- « 2 Հիւլէն 50 »
- « 3 Սուլթան Համիտ Ինչպէս մեռաւ Գին 1 Քրանդ

Ժողովուրդին Մասնադարանի գրքոյկներուն հեղինակն է Տ . Ա . Պալեան, եզրպատահայոց քաջ ծանօթ իր հրատարակութիւններով եւ յօդուածներով : Թրքուէին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, եւ Հիւլէն եզրպատագրութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով : Գինը « Արշալոյս » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հետեւեալ հասցէով :

A. BALIAN
(Egypte) Le Gaire

Ծ Ա Ւ Ո Ւ Գ Ի Ր Ք Ե Ր

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիք բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին Պ . Արշալի Չօպանեանի հետեւեալ հեղինակութիւնները :

- 1. Բեթուածներ Գին 5 Քր .
- 2. Մկրտիչ Պէշիկթաշիանի կեանքն ու գործը Գին 5 Քր .
- 3. Ազգային սահմանադրութիւն սակաւաթիւ օրինակներ Գին 10 ՂՐՇ .

Ուսուցիչներու եւ մտաւորականներու համար մասնաւոր վաճ :

ՏՕՔԲ ԵՍՔԻՐ Լ. ՁԷՔՈՊԵԱՆ ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Աւերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վերահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառելու :

Մանկաբարձուհի և մանագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և արտոգրտեան արտերու, իսկ մանուկներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու :

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոյց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կիս օրէ յետոյ ժամը 2-5

Ամէն երեքօրրի ապրասց ձրի դարմանում :

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաթէ Տր Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՍԱՆԱԶԻՒՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկիւրներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 հ աւելի վկայական եւ մեքայնեղով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանոցիսին մէջ ստացած է . ՀԱՅՍՏԱՆԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅՍՏԱՆԻՉ ԱՆՔՂՈՑ ԿԱՅԱՆՈՒՄԱՆ ԵՒ ԹԱՂԱՌՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅՍՏԱՆԻՉ Ն . Բ . ԱՅԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկիւրի յանկանչիմ



Գին ՉԱՓԱՌՐ

ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, փօսկրափներու եւ կազի վառարաններու :

Տասներկու տարին « Սինկըր » Ընկերութեան քով մեքենայարդարութեան զբաղել յետոյ, այժմ զինավաճառ Զարսարի Գոնստանթնուի քով պաշտօնեայ է գէնքիւր եւ մեքենայարդարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանքով վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագայ ժամերը պիտի արամադրէ կարի մեքենաներու, Ֆոնօկրաֆներու, կաշի վառարաններու, նորոգութեանց եւ յարգարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափանցու կրնան դիմել իր տունը Պապը - Շէհրիէի կողմը Շարա Պէղղալ՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարանի Հոյակահանի Տնօրէններուն, եւ դարձեալ դիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել « Արշալոյս » Տպարանին . նշանակելով իրենց հարցէն, Փողոցին անունը եւ Տունին թիւը :

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ : 19 - 50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբոն վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան շնորհիւ մնայուն դիրք մը բռնած է տարիներէ ի վեր : Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախորդները գոն թողելու նպատակաւ՝ սպառելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բժախորդութիւն կը նենք : Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով :

Կշիռը, որուն համար ուրիշ շատ սեղեր զանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոնուակութիւն միայն ստանալ է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոն մնացած են :

Ձեր սուսին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-Էլ-Խալի՝ մեր վաճառատեղին եւ չ'պիտի զղջաք :

46-47 ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ